«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտոր, ի.գ.թ., դոցենտ

Մ. Մուրադյան

«03» 06 2026թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Սուրեն Սարգսի Բաղինյանի՝ «Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» թեմայով ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ.Հովհաննիսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Լ.Բագրատյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Վ.Ասլանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ա.Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Գ.Գ.Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Կ.Մինասյանի քննարկեց Սուրեն Սարգսի Բաղինյանի՝ «Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» թեմայով ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Ս.Բաղինյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Ներկայացված ատենախոսական հետազոտությունը նվիրված է պետաիրավական նշանակություն ունեցող խնդրի՝ պետական դավաճանության քննության մեթոդիկայի ձևավորմանը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև հետխորհրդային տարածքում արձանագրվում է պետական դավաճանության (լրտեսության) դեպքերի աճ, ինչը՝ այդ թվում պայմանավորված է տարածաշրջանային քաղաքական բարդ իրադրությամբ, հիբրիդային պատերազմների մեթոդների կիրառմամբ և օտարերկրյա հատուկ ծառայությունների ակտիվությամբ: Հեղինակը մատնանշում է, որ 2020-2021թթ. քննվել են միայն 2 գործ, իսկ 2022 թ.՝ 24, 2023 թ.՝ 9 գործ, ինչը վկայում է հանցագործությունների տվյալ տեսակի դինամիկ աճի և պետական անվտանգության համար դրանց սպառնալիքի մասին:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն վիճակագրական ցուցանիշներով, այլև այդ կարգի գործերի քննության մեթոդիկային նվիրված ամբողջական ուսումնասիրության բացակայությամբ, իսկ առկա աշխատանքները հիմնականում շոշափում են հիմնախնդրի քրեաիրավական ասպեկտները: Միևնույն ժամանակ, այդ իրավիճակին նպաստում է նաև այն, որ նշված հանցանքի վարույթով դատաքննությունն իրականացվում է դռնփակ պայմաններում, ինչը սահմանափակում է հետազոտողների հնարավորությունները: Այս պայմաններում Ս. Բաղինյանի կատարած աշխատանքը լրացնում է կրիմինալիստիկական գիտության մեջ առկա կարևոր բացը և ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն:

Հետազոտությունը լուծում է մի շարք հրատապ խնդիրներ՝ մշակելով պետական դավաճանության քննության մեթոդիկա՝ սկսած հանցագործության կրիմինալիստիկական բնութագրից մինչև առանձին քննչական և գաղտնի քննչական գործողությունների կատարման մարտավարական-տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Հեղինակի կողմից ձևակերպված առաջարկությունները (օրենսդրության փոփոխության, հետաքննության և քննչական մարմինների փոխգործողության օպտիմալացման վերաբերյալ) ունեն անմիջական գործնական արժեք:

Ատենախոսության *նպատակը* հստակ է ձևակերպված՝ պետական դավաճանության քննության համակարգային ուսումնասիրություն, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանում, ինչպես նաև օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Հետազոտության խնդիրները տրամաբանորեն բխում են նպատակից և դրանք ըստ էության կարող են համարվել լուծված:

Ատենախոսության *գիտական նորույթը* կայանում է նրանում, որ այն հայրենական իրավագիտության մեջ առաջին ամբողջական և համապարփակ ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել համակողմանիորեն քննարկել պետական դավաճանության գործերով քննության մեթոդիկայի հիմնահարցերը: Գիտական նորույթն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում:

Ատենախոսության *մեթոդաբանական հիմքը* լիովին համապատասխանում է հետազոտության նպատակին և խնդիրներին: Առանձնահատուկ ուշադրության է արժանի հեղինակի կողմից էմպիրիկ նյութի (դատական պրակտիկայի, քննչական փորձի) համադրումը տեսական վերլուծության հետ, ինչը բարձրացնում է ատենախոսության հավաստիությունը:

Հեղինակի կողմից օգտագործված գրականության ցանկը (ավելի քան 170 անուն) ընդգրկում է ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան (հիմնականում ռուսաստանյան) հեղինակների հիմնարար աշխատությունները: Մասնավորապես, հենվել է Ա.Գ.Կուլևի, Ա.Վ.Նեստերովի, Մ.Յու.Միլևայի, Վ.Գ.Ենգիբարյանի, Ա.Ս.Չախոյանի, Ռ.Ս. Բելկինի, Ի.Մ. Գուտկինի և այլոց աշխատություններին:

Տեսական հիմքի որակը բնութագրվում է նրանով, որ հեղինակն օգտագործել է ոչ միայն կրիմինալիստիկական, այլև քրեաիրավական, քրեադատավարական, կրիմինոլոգիական գիտելիքներ: Առանձնակի արժեքավոր է, որ հեղինակը վերլուծել է ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև միջազգային լավագույն փորձը:

Հետազոտության էմպիրիկ հիմքը պետք է համարել պատշաճ և բավարար, որը հնարավորություն է տվել հեղինակին ձևակերպել հիմնավորված եզրակացություններ և առաջարկություններ:

Ատենախոսությունն առանձնանում է տրամաբանական ամբողջականությամբ և գիտական ճշգրտությամբ, դրա արդյունքներն ունեն գործնական նշանակություն, որոնք կարող են կիրառվել գիտական հետազոտություններում, օրենսդրական նախաձեռնությունների ժամանակ, իրավակիրառ պրակտիկայում և ուսումնական գործընթացում:

Ատենախոսության եզրակացությունն ամփոփում է հետազոտության արդյունքները և ներկայացնում հիմնական առաջարկությունները:

Հեղինակը խոսքը պատշաճ է, նա տիրապետում է գիտական ոճին, մասնագիտական տերմինաբանությունը օգտագործվել է ճիշտ և հիմնավորված, տեքստը շարադրված է հստակ և հետևողականորեն: Ատենախոսությունը ձևակերպված է ՀՀ ԲՈԿ տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի անհրաժեշտ բաժիններ, հղումներ, ծանոթագրություններ:

Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են հեղինակի կողմից գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ատենախոսություն վերաբերյալ ներկայացնել որոշակի նկատառումներ.

1. Ատենախոսության մի շարք հատվածներում նկատվում է կրիմինալիստիկական և քրեաիրավական վերլուծությունների անհամաչափություն, ինչի հետևանքով աշխատանքի առանձին բաժիններում կրիմինալիստիկական բաղադրիչը երկրորդական պլան է մղվում: Օրինակ, առաջին գլխում զգալի ծավալ են զբաղեցնում քրեաիրավական բնույթի վերլուծությունները, մինչդեռ պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրի տարրերը երբեմն ներկայացվում են ոչ բավարար խորությամբ:

2. Աշխատանքում օգտագործվող «կրիմինալիստիկական մեխանիզմ», «տիպային մոդել», «քննչական իրավիճակ» հասկացությունները միշտ չէ, որ ունեն բավարար

տեսական սահմանազատում և հստակ տարբերակում հարակից կրիմինալիստիկական կատեգորիաներից:

3. Ատենախոսության մի շարք հատվածներում (1-ին գլխի 2-րդ և 3-րդ պարագրաֆներ, 2-րդ գլխի 2-րդ և 3-րդ պարագրաֆներ) հեղինակը քննարկման առարկա է դարձնում տուժողի անձը, մինչդեռ պետական դավաճանության դեպքում տուժողը ֆիզիկական կամ իրավաբանական անձը չէ, այլ՝ պետությունը:

4. Ինչպես նշում է հեղինակը, հետազոտության ընթացքում կատարվել են հարցումներ քննիչների և օպերատիվ աշխատակիցների շրջանում, սակայն ատենախոսության մեջ ներկայացված չէ հարցման ժամանակահատվածը, հարցաշարի կառուցվածքը, հարցվածների ընտրության չափանիշները (փորձի տևողությունը, զբաղեցրած պաշտոնը, կրթական մակարդակը և այլն), ինչը թույլ կտար փաստել հարցման ռեպրեզենտատիվությունը և պատշաճ գնահատել հարցման արդյունքների ու հետազոտության արդյունքում արված հետևությունների միջև կապը:

5. Պաշտպանության ներկայացված 1-ին դրույթը դուրս է գալիս հետազոտության առարկայից, քանի որ այդ դրույթն ըստ էության արարքի քրեականացմանն ու պետական դավաճանության քրեաիրավական որակման հստակեցման ուղղված օրենսդրական առաջարկ է:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ. Սուրեն Սարգսի Բաղինյանի՝ «Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է պետական դավաճանության փաստով քննության մեթոդիկային, քրեական վարույթի պատշաճ կազմակերպմանը, քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության վերաբերյալ համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.04 – Դատական

իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Սուրեն Բաղինյանի ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի՝ համատեղման կարգով դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ Հովհաննիսյանի կողմից (քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2026թ.-ի հունիսի 3-ի նիստում, արձանագրություն № 11):

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի
նախարարության կրթահամալիրի ոստիկանական
ուսումնական ստորաբաժանման օպերատիվ-հետախուզական
գործունեության և քրեագիտության ամբիոնի պետ՝ Մանուկ Սեմերջյան

«03» հունիսի 2026թ.

Մ.Սեմերջյանի ստորագրությունը հավաստում եմ:
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքների
համակարգող պրոռեկտոր Ա.Սուքիասյան